

ԹԱՆԳԱՐԱՆ

ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԿԱՆ

ՏԵՏՐ 2.

ԳԻՆ 60 ՓԱՐԱՅ



ԿԵՐՈՒԻՄ

և ճԳԱՐԱՆԻ ԹԱՆԿՈՒԹ ԵՒԿԻԹՅԱՆ

— 1867 —



2


1283

Մասկանէ գրգեալ այս գգացողութիւնը կը  
կորսնցնէ այն օրն , երբ զարթուցեալ խիղճը ,  
բարոյական և ֆիզիքական օրինաց մէջ եղած  
զանազանութիւնը կանանէ , և բարոյական ամէն  
անասկ կարողութեանց անբողջութիւնը հոգի  
կկոչէ :

Մ.Յս բարը վե բացեալ անուն կը կցու-  
ցնէ , զի հոգին կ'այսանուի մարմնոյն հետ ու-  
նեցած միութեամբն : Արեւմտեալը է ըսել  
թէ հոգին մարմնոյն վրայ կազդէ , զի մեր  
երկուքն ալ իրենց գործողութեան միութեանը  
մէջ կնշմարենք : Մ.Ջ ձեռքը ձախը կրննէ ,  
բայց ոչ ինքնիրեն : Մշխակա , խակումն (մաս-  
ճեխն) , խակապէս միացեալ հոգւոյն և մարմնոյն  
անբաժանելի գործողութիւնն է : Օչ այս հաս-  
տատող բազմութիւ օրինակներ կան . ինչպէս՝  
խնդալն , արտասուքն , իր նշաններէն մին է ,  
որանց կասն է ջղային գրութիւնն \* : Մ.Յս կե-  
տին վրայ ուրիշ ըսելիք չունինք :

\* Տ զայն ԿԵՆՏԻՆ ըսելով , պէտք է ի-  
մանալ , մարդու մարմնոյն ամէն կողմ տա-  
րածուող ջիզերն , որք ճնունդ կանուան ուղե-  
ղէն . — ջիզերուն պաշտօնն է մարմինը շարժել  
և գդալ . — մարմնոյն այն մասին մէջ որ ջիզերը  
կհիւանդանան , այն մասը շարժելու և գդալու  
կարողութիւնը կկորսնցնէ . ինչպէս և նախնիքը :

Մ.Յս  
659



Նոյնպէս պիտի զգուշանանք, հիւանդութեան պատճառներուն և բժշկուելու վրայ խօսելու ատեննիս, դատարկ մեկնութեանց մէջ մտնելէ : Մ.մէն հիւանդութիւն, ներքին կամ արտաքին պատճառ մ'ունի. և հիւանդութիւն մը ծնունդ կառնու, թէ ի ծնէ ունեցած սերմի մը արտաքին ազդեցութեան աճմանէն, թէ բնակած կլիմային մնասակար ազդեցութենէն, որ և նոյն ազդեցութիւնը կաւելնայ մարդու այն ինչ հիւանդութեան ունեցած բնական և մասնաւոր յարմարութեամբն : Մ.ռաջին կարգին կվերաբերին ոչ միայն ժառանգական, և կազմուածքէ կախումն ունեցող հիւանդութիւններն, այլ նաև խումբ մ'ալ ուրիշ տեսակ հիւանդութիւնք, որոնց ո՞ր տեսակի վերաբերելնին դեռ բաւական սորվուած չըլլալով, ճշդիւ կարգի մը տակ դասուած չեն :

Կհարցնեմ թէ, արդե՞ք, այս տեսակ պարագայից մէջ, միտքը՝ հիւանդութեան դէմն առնելու որ և է կարողութիւն մը չունի : Չեմ խօսիր, բժշկաց՝ մարդուս կազմուածքը բարւոքելու և հիւանդութեանց դէմն առնելու համար գործածած միջոցներուն վրայ : Մ.յս դեղերն ալ արդարև մտքէ կծնին, բայց ոչ թէ հիւանդին մտքէն : Պիլիսոսիաները, մանաւանդ բարոյագէտները, ժուժկալութիւնն և կիրքերը

բարեխառնելու արհեստը կսովբեցնեն : Մենք  
այլ, մեր այս պաշտօնին մէջ, ահա, այս դա-  
սերը պիտի տանք :

Հասարակութեան նայելով, մարդու մը  
առողջութիւնը, կազմուածքէն կդատուի : Աւ-  
րեմն, ինչ ըսել կուզէ այս բանը (առողջու-  
թիւն) իր ռամկական նշանակութեամբն : Արիշ-  
բան չէ, այլ մարդուս կազմուածքը բազկա-  
ցնող զանազան տարերց ներդաշնակաւոր հա-  
մեմատութիւնը : — «Այն, ըսաւ Հէռտըր,\*  
մարդուս ֆիզիքական և բարոյական կատարե-  
լութիւնը կազմող բնական համեմատութիւններ,  
որոնք անթիւ ըլլալով, գոյութեան բոլոր ձե-  
ւերը կպարունակեն . ինչպէս՝ ամենէն քարշելի  
տձևութենէն, մինչև Յոյն դիւցազանց երկնա-  
յին (առասպելեալ) գեղեցկութիւնն : Ամէն  
մարդ, ամէն տեսակ միջոց ի գործ դնելով  
իրեն յատուկ և յարմար եղածները կփնտուէ :

---

\*Աթֆրրիտ Հէռտըր, Վերմանացի գրա-  
գէտ, ծնաւ 1744 ին, Մօնոունկրնի մէջ  
(Արևելեան Նորուսիա) աղքատ ընտանիքէ մը,  
և մեռաւ 1803 ին . միայն իր ջանիւքն ու աշ-  
խատութեամբն յառաջացաւ և կղերական դասը  
մտաւ : Նազմաթիւ գործեր ունի Արօնական,  
Ղստուածարանական, Փիլիսոփայական, Պատ-  
մական, Հնագիտական, Վրական և Արհես-  
տական :

զի նորա միայն իւր կենաց կատարեալ վայելու-  
մը կուտան” : Աւ ես կաւելցնեմ այս մա-  
սին , ըսելով թէ , նորա են առողջութեան  
պայմաններն : Աւստի , կհարցնեմ թէ , մարդս՝  
որ բնութեան մէջ միայն ինքն է կարող ինք-  
զինքը սովորելու , չկրնար ինքզինքը ճանաչել :  
“Այն որ” , ըսաւ , Պիւթագորաս , \* “տիեզերս  
կչափէ , չկրնար ինքզինքն ալ չափել” : — Այժմ  
մարդս , կարող է իւր համեմատութիւնները  
ճանաչել և չափել , ուրիշ բանով չէ , այլ  
նոյն իսկ մտաց կարողութեամբն . ուրեմն ,  
մարդս՝ հողւոյն միջոցաւ , կարող է , իւր գո-  
յութեան վրայ ազդել , և հետեաբար հի-

---

\* Ծնաւ Քրիստոսէ առաջ 408ին Ապտերի  
մէջ : Արիտասարդութեան մէջ բռնակիր էր .  
ետքը՝ Ռէմոկրիտէսի աշակերտն եղաւ : Վարդմը  
բացաւ նախ Ապտերի մօտ , յետոյ Մթենք ,  
և ստակով դաս տալով խիստ հարստացաւ .  
Յունաստանի գլխաւոր քաղաքները , Սիկիլիա ,  
մեծ Յունաստան գնաց , և վերջապէս Մթենք  
եկաւ բնակելու . բայց Մթենացւոցմէ վռնտ-  
ուելով , մակոյկով փախչելու ատեն , ծովը  
խեղդուեցաւ 489ին Քրիստոսէ առաջ : Ղար-  
տասանութեան , Բնական գիտութեան և Քա-  
ղաքավարութեան վրայ շատ գրեց . բայց բո-  
լորն ալ երեցին Մթենքի դատաստանապետ-  
ները :

անդուլթեանց , մանաւանդ թէ նոքա անոնց  
աղբիւրն , իրենց անձնական կազմուածքին մէջն  
ունին :

Տարօրինակ պահանջմունք , այնպէս չէ ,  
հոգւոյ զօրութիւնն իւր սահմաններէն անդին  
տարածել ուզելը , կարծես թէ ապրած աշ-  
խարհնիս մեր կենաց հուսկն եղած ըլլար . ե-  
զական է այս , սակայն ինչ ասկէ աւելի ճշ-  
մարիտ : Մարդ , տղայ , ամէն մէկն ինքզինքը  
կներկայացնէ իւր մասնաւոր կազմուածքին , իր  
քիչ կամ շատ զուարթ , քիչ կամ շատ տը-  
խուր բնաւորութեանը համեմատ . կարողութիւն  
մ'է որ կգործէ , զգացուածին համեմատ :  
Ուրախութիւն կամ տխրութիւն հոգւոյ  
զգացածներուն պատկերներն ըլլալով , չենք  
կրնար , արդեօք , ուզած ատեննիս զանոնք ե-  
րևան հանելու կամ աներևութացնելու միջոց-  
ները գտնել : Ընք կրնար , արդեօք , մեր  
աչքերը միշտ աղէկը տեսնելու կրթել , քան  
թէ զանոնք սեցնել և տկարացնել , ինչ որ կը-  
նենք միշտ խնամոց զանցառութեամբ : Արդա՛ ,  
Շէքրսբիւրի \* մէջ , փոթորկի ատեն Ա իւ

---

\* Աւելեամ Շէքրսբիւր , Անգղիացի թատ-  
րերգական բանաստեղծից առաջինը , ծնաւ 1563  
կամ 1564 ին , Ա լաուվիք վիճակին , Աթրաթ-

Թագաւորին և իւր ընկերոջ կորսուիլը . մէկն  
անձրեւէն թրջած , ցուրտէն կդողայ , իսկ միւսը  
համր և անզգայ , փոթորկին դէմ չափազանց  
բարկանալուն :

Մտաց կարողութեան ամենէն ազդու նշանն  
է իր անկարողութիւնն : Ով չգիտէ թէ ոամիկք ,  
որոնց հոգին տգիտութեան գիշերով ծածկը-  
ուած , մարմնական բազմաթիւ հիւանդութիւն-  
ներէ ազատ կմնան , որոնց ենթակայ եղած են ,  
ընդհակառակն , իրենց շուրջը գտնուող խիստ  
շատերն : Առաջիններն , իրենց ուշադրութիւնը ,  
միշտ մի և նոյն խորհուրդով մը յափշտակ-  
ուած , մարմինը կմոռնան , որով մտաց բոլոր  
զօրութեանց այսպէս մէկ կէտի մը վրայ ամփո-  
փումը , զիրենք արտաքին ազդեցութեանց ան-  
զգայ կընէ : Աթէ այսպէս է , ուղիղ , հաս-  
տատ , և աղէկ տնօրինեալ կամք մը չկրնար  
ունենալ այնքան կարողութիւն , և մի և նոյն  
գործերն ընել , որչափ կընէ նուաճեալ , ան-  
շարժ կամք մը , ինչպէս է խենդիներ :

Փորտչայր աւանի մէջ , փուրթ ծախողի մը զա-  
ւակ էր . 18 տարեկան ամուսնացաւ , 26 տա-  
րեկան օրիորդի մը հետ , խիստ անկատար էր  
առած դաստիարակութիւնը :

Պէտք չէ ըսել թէ որչափ անհամար են  
այս հեղինակին գործերն , և մանաւանդ ամէնքն  
ալ մէկզմէկէ ընտիր :



Մեզ զի ապի բժիշկ մը, Մեզ զի ոյ կլիմային,\*  
որ մառախլապատ և ածուխոտ է, իր հայրե-  
նակցաց առողջութեանն ըրած ազդեցութեանցը  
վրայ խօսելու ատեն, հետեւեալ դիտողու-  
թիւնները կրնէ : «Մա՛հ, որ մինչև ցարդ  
Ղոնտրայի օդին յատկացած խուճք մը հիւան-  
դութեանց պատճառը՝ բնակչաց սովորութենէն  
կախուն մն ունենալն ըլլալը չէ որոշուած» : Օ՛ր  
ինչպէս որ մարմինն, օդին տաքութեան աստի-  
ճանին ամէն փոփոխութեանց դէմ, իւր ներ-  
քին տաքութիւնը գրեթէ անփոփոխելի կպահէ  
միշտ, նոյնպէս ալ մարդկային հոգւոյն մէջ  
դիմանալու հաստատ զօրութիւն մը կայ, որուն  
դործողութիւնն՝ արտաքին զօրութեանց վայ-  
րենի դործողութեանը կհաւասարակշռէ : Է-  
ւանդ կին մը, մինչև անգամ իւր սենեակին  
մէջ պտրտելու անկարող, սակայն առանց հոգ-  
նելու և ցաւ մը դգալու, մինչև կէս գիշեր  
պիտի կրնայ պարել իր մէկ սիրած պարողին  
հետ : Մ. յս ըսածնիս բազմաթիւ օրինակներով  
հաստատուած է բժիշկներէն : Օ՛ր սիրելի կիրք  
մը, մարմնոյն կենսական թելը կզարթուցանէ :  
Մե՛նք որ Ղոնտոնի օդէն կտժգոհին, ճիշտ  
այն խուճք մը անպիտան, ծոյլ և դատարկա-

---

\* Մեզ զի ոյ կլիման խոնաւ, ցուրտ և մի-  
գոտ (խոնաւ) է :

պորտ մարդիկն են . զի անոնք միայն օգաչափը  
չեն քններ , որոնց ուշադրութիւնն ու մարմինն  
անդադար զբաղած են : Իրաւ է որ 'Նոյեմբերի  
տխուր ամիսը , մելամաղձութեան և անձնաս-  
պանութեան ժամանակն է , բայց և այնպէս ամ-  
մենախաւար երկինքի մը բոլոր ամպերը չեն կա-  
րող պայծառ հոգւոյ մը զուտ օդը խաւարել :  
Եւելագարութեան բարոյական աղդեցութեան  
տակ ընկճեալ հիւանդք աւելի պակաս կնեղ-  
ուին ասով , քան թէ օդին ֆիզիքական աղ-  
դեցութեամբը : Մարդս ինքզինքն իր ձեռօքը  
միշտ խռովելու ենթակայ ըլլալով , աշնան ատեն ,  
զորօրինակ , տերւները թափելու ատեն տես-  
նրուած զանազան դէպքերը , մահառիթ կար-  
ծիքներով կմեկնէ , որք մարդուս միտքը կը-  
տանջեն ու կտկարացնեն : Արդարեւ , եթէ մելա-  
մաղձի մը վախերն , անհանգստութիւններն օդին  
փոփոխութեանց հետ կպակսին կամ կշատնան , այս  
ալ մէկ խօսքով , դարձեալ կամքին գործն է ,  
ուսկից կախումն ունին հիւանդին խելացնոր  
յարմարութիւնն ու զանի ծնող հետեւութիւնը :  
Մելամաղձութիւնը միշտ տկար բնաւորութիւն  
մը , կամ թէ դէթ ժամանակաւոր տկարութիւն  
մը կենթադրէ : Մարդս ձանձնալով իր հոգ-  
ւոյն տկարութիւնը , զանի դարմանելու է առանց  
հանգստեան և դադարման . այս է ահա , այս-

սխիսի պարագայից մէջ , բժշկուելու ամէնէն  
ազդու և ընտիր միջոցն ” :

(Մեզդիական՝ Սեբեասեան Ունիւեթիւնն անուն  
օրագրէն առնուած . 1830) :

Արն է այն բժիշկն , որ իր փորձառու-  
թեանց շրջանին մէջ , որչափ որ ալ նեղ ըլլայ ,  
այս տեսակին վերաբերեալ խումբ մը օրինակ-  
ներ չէ ժողոված . օրինակներ , որք խիստ յա-  
ճախ կտեսնուին , մանաւանդ բազմաբնակ մեծ  
քաղաքաց մէջ : Չե՛նք կրնար ըսել , ուրեմն ,  
եթէ ներելի է , թէ քաղաքաց օդը բաղադ-  
րեալ է բնակչաց կիրքերէն , մտածմունքներէն  
և սրտմաշուքներէն : Անձնասպանութիւն ,  
զոր Ա ինքն ինք աւելի թշուառութեան կ'յատ-  
կացնէ , խիստ զգայուն բնաւորութեանց , խիստ  
գիւրազգաց հոգիներու բաժինը չէ մի , որք  
խիստ տկար են արկածից իրական կերպով տա-  
նելու : Ա կայութեան կ'հրաւիրեմ պաշտօննին  
խղճիւ և անթերի կատարող բժիշկները : Ար-  
ժիշկն՝ իր պարտաւորութիւնն ամենայն խղճիւ  
և անձնուիրութեամբ կատարելովն է որ կարող  
եղած է նեղ օրերուն մէջ , ամէն դժուարու-  
թեանց յաղթել , անվտանգ պահել իր Ֆիզի-  
քական և բարոյական գոյութիւնն՝ այնքան տը-  
խուր դիպաց և անցից մէջ : Վարտաւորութիւնն ,

Մ. քիւլլէսի\* նիզակին նման, ըրած վէրքերն  
ինքը կբուժէ: Աէօթըն՝ ահա այս մասին ազդու  
օրինակ մ'է, կամքին մարդուս մարմնոյն վրայ  
ունեցած ազդեցութիւնը յայտնելու. այսպէս  
կպատմէ նա ինքն, Աէօթը: «Տարափոխիկ ջերմի  
մը ատեն, որ բոլոր շուրջս անհամար զոհեր  
կընէր, անզերծանելի ժանտի մը ենթակայ եղած  
էի, բայց և այնպէս կարող եղայ, ազատ մնալ  
հաստատ կամքիս ազդեցութեամբը. չէ գիտ-  
ցըուեր դեռ թէ կամքն՝ ինչ մեծ զօրութիւն  
ունի այսպիսի պարագայից մէջ, զօրութիւն մը,  
որ բոլոր մարմնոյն մէջ տարածուելով, այն-  
պիսի աշխուժութեան մը մէջ կդնէ մարմինն,  
որով հեռի կմնայ ամէն վնասակար ազդեցու-  
թիւններէ: Ալախը՝ տկարութեան նշան է, որ  
զմեզ առանց պաշտպանի՝ թշնամւոյն յաղթող  
յարձակմանց տակ կնուաճէ»: Հոգւոյն՝ կե-  
նաց, կամ հոգւոյն՝ մարմնոյն վրայ ունեցած

---

\*Թէթիսի և Ռէլէի որդին, Ֆրթիօթիտի  
թագաւոր, Տրովագայի պատերազմին մէջ ա-  
մէնէն հռչակաւոր դիւցազնիւններէն առաջինն ե-  
ղաւ: Պատերազմին տասներորդ տարւոյն մէջ  
Ռիամի դուստր, Ռօլիքսէնի հետ պիտի ա-  
մուսնանար, եթէ Ռաարիս զինքը չսպաննէր:  
Սակայն ուրիշ կերպ ալ կպատմեն ասոր մահն.  
Ինչպէս Հոմերոսի մէջ կկարդացուի թէ պա-  
տերազմի մէջ մեռաւ:

ազդեցութեան վրայ խօսելու ատեն, կրնանք յառաջ բերել Աէօթըն իբրև օրինակ, և ասացոյց. զի ասոր համար ամէն բան ճշմարիտ և իրական է: Ի այց ինչպէս շատերու, նոյնպէս Աէօթի համար ալ ըսողներ պիտի գրտնուին, և կգտնուին, թէ ասոնք ուրիշ բան չեն, այլ ցնորք:

Ի այց ինչ է կեանքը բնապէս, եթէ ոչ կամքին աշխատութիւնն, որ կծառայէ նուաճել արտաքին զօրութիւնները, փոխել մարդուս վիճակն՝ իւր անվախճան յաղթութիւններովն, առանց նորա (մարմինին) իսկութիւնն, էութիւնն այլայլելու: Ինքնակամ աշխուժութիւնը գոյութեան պայմանն է, և որուն պայմանն ալ մարդուս իմացական կարողութեանց կատարելագործութիւնն է, որք են ՄՏԱԾԵԼ, ԿԱՄԵՆԱԼ, ԳՈՐԾԵԼ: Արքան որ մարդուս մտածելը զօրաւոր ըլլայ, իր ինքնակամութիւնն ալ այնքան աւելի աշխոյժ կը ըլլայ, որ այս ալ ուրիշ բան չէ, այլ նոյն ինքն կամքը:

Մարդս, իրաւ է որ, զինքը նեղող, աշխարհս բոլորովին իր վրայ ծանրացնող հազար ու մէկ ազդեցութիւններով շրջապատեալ է. բայց իր բնաւորութենէն ալ աւելի զօրաւոր բան չկայ: Ինութեան մէջ գտնուած էակները, զօրութիւններ ըլլալով, մարդուս ամբողջու-

Թիւնն ալ ոյժ մ'է : Աւտի երբ այս ոյժն ինքն-  
իրենն չզարթնուր , պէտք է , սաստիկ շարժմամբ  
մը այնպիսի վիճակի մը մէջ դնել , որ վերջա-  
պէս ստիպուի կանխաւ : Վործելն ապրիլ է .  
ինչպէս որ և հին առած մը կըսէ թէ , ճան-  
քորդոս-խեան մէջ կամ ամուսնո-խեան տուք օրը շեռ-  
նուի : Մտիկ ըրէ , Պուլվըր , այս խորին մտա-  
ծողը : «Վրեթէ բնաւ , կըսէ , մանաւանդ Ե-  
րիտասարդութեան ատեն , հիւանդութիւն մը  
անբուժելի չէ , քանի որ միտքն առողջ է :  
Վմէնէն փափուկ և ամէնէն տկար մարդը թող  
ինքզինքն աշխատութեան տայ , այն ատեն հի-  
ւանդ ըլլալու ժամանակ չպիտի ունենայ , ծու-  
լութիւնն է մարդս սպանողը , չճառայող պող-  
պատն ալ կժանգոտի » :

Ա վերջապէս ինչ որ ալ ըլլայ այս ընդհա-  
նուր դիտողութեան արժէքը , մինչև անդամ  
եթէ աշխատութիւնն ու անգործութիւնը մի և  
նոյն հիւանդութիւնները ծնէին , դարձեալ  
պէտք է խոստովանիլ թէ մէկը միւսէն մեծա-  
պէս կտարբերի , մէկն ողջպահիկ , և միւսն  
հակառակ ըլլալով , հոս կամիփոփենք , և պէտք  
չենք տեսներ ուրիշ օրինակներ ալ աւելցնել ,  
հոգւոյն՝ հիւանդութիւնները մարմինէն հեռա-  
ցընելու կարող ըլլալը հաստատելու :

# Գ Լ Ո Ւ Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Վեդեցիո-թի-նն՝ առողջութեան նշոյն է :


Բնութեան նման մեծացոյ քան զկայ .  
և զկայ քան ճը այնքան համեմելի , որչափ  
առողջութի-նը :

Պ. որ Ելեկէլ : \*

ԿԿԿ  
959

Վրոյս առաջին մասին մէջ , մարդուս մտաց՝  
արտաքին ազդեցութեանց դէմ դիմանալու ոյժը  
հաստատեցինք : Արքաքննին տաղանգք ըսած  
են թէ , « որովհետեւ մեր հարթնը լուսաստորո-  
թեան և աշխարհիս Գոգիտութեանց գործին է , ուստի  
անյին տեր ըլլան ալ , աշխարհիս տերն ըլլալ է » :  
Սենք մինչև հոն երթալ համարձակեցանք .  
սակայն բաղդը մեր ձեռաց մէջ այնպիսի գիւրք մը  
ձգել տուաւ , ուր այս կարծեաց համամիտ խոր-  
հրդածութիւններ կգտնենք , ինչպէս է զորօրի-  
նակ հետեւեալն , որ միանգամայն պարզ և  
դիւրհասկանալի ըլլալով մեկնութեան չկարո-

\* Փիլիսոփայ , ծնաւ 1772 թուականին Հա-  
նովրի մէջ . 1827 ին Ա իէննայի մէջ փիլիսո-  
փայութեան դասատու եղաւ , ուր մեռաւ 1829 ին :  
Փիլիսոփայութեան վերաբերեալ շատ գրու-  
թիւններ ունի . որոնցմէ շատերը Վաղղիարէնի  
թարգմանեալ են :



տիր : « Ճշմարտութեան գէժ է արդեօք , Ա-  
ռաջին՝ հոգին ու մարմինը մեկզմէկու վրայ  
փոխադարձ գործողութիւն մ'ունենալնին հա-  
ւատալն : Արկրորդ՝ թէ հոգին իբրև անշօշա-  
փելի ոգի մը , ամենուրեք առանց խոչընդոտի  
թափանձելով , իր ազդեցութիւնն արտաքին  
աշխարհին , մարմնոյն վրայ կներգործէ , և թէ  
իր ամենաշխոյժ գործողութեանցը համեմատ  
անոնց ծնունդ տուած կեդրոնը կփոփոխէ :  
Աւստի և մտախոհութիւնն իրաւունք կուտայ  
մէզ սա ենթադրութիւնն ընել թէ , բարե-  
սիրտ մարդուն ներկայութիւնն երկիրս կպտղա-  
բերէ , օդը կմաքրէ : Իսկ չարն ու իր շարու-  
թիւնները տեսակ մը ժանտ կտարածեն իրենց  
շուրջն , որոնց ճամբուն վրայ բարեսիրտ  
մարդը կմտի , և տկարն ալ գէշութիւն ընելու  
յօժարութիւն կզգայ : Այս յառաջ բերած-  
նիս , թէ որ այսօրուան համար տարօրինակ կե-  
րևի , տարակոյս չկայ թէ տարիներէ ետքը հա-  
սարակաց ճշմարտութիւն մը պիտի ըլլայ : Թող  
մտածուի , զորօրինակ թէ , ինչ կխորհի հա-  
սարակութիւնը , մարդասպանութիւն գործուած  
տեղի մը վրայով . ուստի հասարակաց հաւատքը  
կամ կարծիքը քննութեան առնուիլը կարևոր  
է , զի ընդհանրական վկայութիւն մ'է , որ  
շարունակ կքննէ գէպքերն՝ առանց մեկնելու :



Աւանդ, որ չենք դիտեր թէ ի՞նչ պիտի գու-  
շակէր, Պէպլինի երևելի Հէյմս բժիշկն,  
որ խիստ հռչակաւոր էր՝ մորթային հիւանդու-  
թեանց տեսակը միայն հոտէն որոշելու կողմանէ,  
մի և նոյն անդամով, հոտոտելիքով, իրեն հետ  
յարսքերու թիւն ունեցող մարդոց բարոյական  
զանազանութեանը նկատմամբ՝: Այս հետա-  
քրքրական հատուածէն քաղելիք օգուտն ըն-  
թերցողին թողլով, ուրիշ մ'ալ յառաջ կը-  
բերեմ, Սթաէլին\* սա երևելի մէկ խօսքն, և  
որուն վրայ աւելի կանանց ուշադրութիւնը կը-  
դրաւեմ, յուսով թէ նոքա ևս նայուածք մը  
նետեն այս գործիս: «Մեր ձեռքն է առող-  
ջութիւնը վերստին ձեռք ձգել, հիւանդութե-  
նէն չվախնալով, և աղէկ հասկնալ թէ առող-  
ջութիւնն է մարմնոյն գեղեցկութիւնն և կե-  
նաց հրապոյրը»: Չանանք, ուրեմն, այս խը-  
րատին խորը թափանձել. զի մարդուս Ֆիզի-  
քական վիճակը բարոյական վիճակին թարգ-  
մանն է:

---

\* Հեղինակ եղող կանանց առաջինը. ծնաւ  
Փարիզ 1766ին, ուր և մեռաւ 1867 յուլիս  
17ին:

Այս հռչակաւոր և հազուագիւտ կնոջ  
կենցաղավարութիւնն արդէն Աիլիկիոյ մէջ հրա-  
տարակելու պատրաստած ըլլալնուս, հոս համա-  
բոս կանցնինք: (Տես Աիլիկիա թիւ 7):

Աւագածեալ\* «յաղագս դիմաց» անուն  
պատուական գործոյն մէկ գլխոյն մէջ կընայ  
անդացուցանել թէ, ինչպէս որ բարոյական գեղեցկու-  
թեան և Ֆիզիքական գեղեցկութեան նոյնպէս ալ Ֆիզիքական սոգեղութեան և բա-  
րոյական սոգեղութեան մէջ զգալի ներդաշնա-  
կութիւն մը կայ: Այս նմանութիւնը ճշգիւ-  
կհաստատէ թէ, արդարեւ երկնային իմաստու-  
թիւնն ամէն մէկ անհատին մասնաւոր և որոշ  
ձև մը տուած է: Սակայն գեղեցկութիւն բա-  
ռով պէտք է հասկնալ ոչ թէ անցաւոր հրա-  
պոյր մը տուող քաղցրութիւնն, այլ միտքն  
որ գոյութեան ամբողջութիւնը կներկայացնէ,  
ու նաև պէտք է իբաց հանել կրից չափազան-  
ցութիւններէն ծնունդ առնող անջինջ տիպն:  
Այն խորագիմայից կվերաբերի, գրեթէ ան-  
հերքելի փորձերով, հաստատել թէ, ամէն  
մարդկային կազմուածք իր գոյութեան մէջ իր  
վերջին կատարելութեանց ձևերն ու օրէնքները  
կպարունակէ, և թէ բնութիւնը նիւթական աշ-  
խարհին մէջ իմացականութեան աշխարհը կա-  
ռավարող օրինօք յառաջ կերթայ, մենք ըստ  
մեր կարծեաց պիտի ըսենք թէ միտքը, մարմ-  
նոյն ձևին վրայ ալ ազդեցութիւն ունենալով,  
իր զօրութիւնը կցուցնէ թէ գեղեցկութեամբ

\*Տես երես 3:

և թէ առողջութեամբ : Բնաւորութիւնն , այսինքն զգալու և կամենալու սովորական եղանակը , կաճեցողական միսերուն\* վրայ ազդելով , կազդէ հետեւաբար ևս դիմաց նշաններուն և գծերուն : Դպիտը , խնդալն , արտասուքը , ջղային շարժմունքն , և այլն , յաճախ կրկնուելով , դիմաց կակուղ մասանց , այսինքն նոյն մասին մէջ գտնուող միսերուն և մորթին վրայ ներգործելով , հոն կձգեն իրենց նշանը , նոյն մասանց՝ նոյնը յաճախ կրկնուելու մեծ յարմարութիւն մը տալով . այնպէս որ , վերջապէս նոյն մասին մշտնջենաւոր սովորութիւն մը կուտայ : Միսերուն այսպէս յաճախ կրկնութիւնն ալ յաջորդաբար իրենց տակն եղող կարծր մասունքները փոխելով է որ , կմեկնեն մարդոց գանկերուն զանազան , հաստ կամ բարակ ըլլալու վիճակները : Արքրոտ մարդիկ , ծերութեան ատեն իրենց ճակատներուն վրայ , հանդարտ

---

\* Բնագննութիւն կոչուած գիտութիւնը , մարդուս կազմուածքին մէջ գտնուած բոլոր միսերն երկուքի բաժնած է . Բնչպէս միսերէն ոմանք ուզենք չուզենք , քնանանք կամ ոչ , անդադար շարժման մէջ են . այս դասէն են զորօրինակ սիրտն , և աղեաց , ստամոքսի , և այլն մէջ գտնուած միսերն : Ոմանք ալ (միսերէն) կշարժին երբ ուզենք , զորօրինակ ձեռաց , ոտից , և այլն , մէջ գտնուած միսերն :

մարդոցմէ աւելի կորնճմտած խորշում ունին :  
Արդարեւ , առաջիններուն , դիմաց միսերն աւելի  
շատ անգամ շարժման մէջ մտնելնուն , սոյն  
շարժումներէն ծնունդ առած ծալքերը մշտն-  
ջենաւոր կմնան . այսպէս կըլլան նաև մարմնոյն  
ամէն անդամներն , ամէն մէկ մասն : Այն որ  
բարեբաղդաբար ազատ է մեծ սրտմաշուքներէ ,  
երկայն ատեն հանգիստ և ուրախ շնչելով ,  
կուրծքն ազատօրէն աւելի կլայննայ ու կմեծնայ .  
նոյնպէս նաև իր մէջ պարունակեալ անդամք\* :  
Անդհակառակը , մի և նոյն քննութիւնը ցաւօք  
և հեծութեամբ ապրող , արեան շրջանի ազատ  
գործողութեան արդելք ունեցողներուն վրայ  
ընելով , ցաւալի նշաններ սխտի նշմարուին ,  
տխուր նշաններ , որք ծնունդ կառնուն արտա-  
շընչութեան խանգարումներէ , սննդեան գոր-  
ծողութեանց տկարութենէն , և այլն : Մարդս՝  
իր բոլոր կենացը մէջ սովորաբար ենթակայ  
եղած բարոյական տպաւորութեանցը դրսէն ան-  
դամային նշանը կպահէ . և այս նշանն այնքան  
աւելի անժխտելի , աւելի բացայայտ է , որքան

---

\* Կուրծքին մէջ պարունակեալ անդամներն  
են երկու թոքերն (ագճիյէր) շնչառութեան , և  
բրիւնը մաքրելու յատկացեալ անդամներն , և  
սիրտն , որ կեդրոն և ամբար է արեան , և զանի  
բոլոր մարմնոյն մէջ պտրտցնելու կծառայէ :

որ տպաւորութիւնք աւելի կանուխ , սաստիկ ,  
ուժգին , ու աւելի յաճախ եղած , և վերջա-  
պէս եթէ բնական յարմարութեանց աւելի  
համաձայն են : Այրող մարդս կենաց շրջան  
մ'ըլլալով , ամէն բան իր գոյութեան հետ կը-  
կապակցի . ինչ որ կ'յայտնէ գունաթափ և  
թոռմած գէմք մը , նոյնը կնշանակեն և կ'հաս-  
տատեն ուրիշ նշաններն ալ . ինչպէս մարած ձայն  
մը , գողգոջուն քալուածք մը , վարանեալ միտք  
մը , օղի փոփոխութեանց ենթակայութիւն մը ,  
և այլն : Միտքն , եթէ ունի թոյներ , որոնց-  
մով մարմինը կ'թունաւորի , ունի նաև գեղ-  
թափներ (բանդէհեբէբ) , որք զանի կպահպանեն  
և կ'բուժեն : Աստի , նոյն ինքն գեղեցկու-  
թիւնն ալ մէկ նպատակաւ , նշան է առողջու-  
թեան , զի գործարաններուն ներդաշնակու-  
թիւնը , ձեւերուն ներդաշնակութեամբը կ'յայտ-  
նուի : Արեմն , եթէ մարդս առաքինութեամբ  
կ'գեղեցկանայ , եթէ մոլութիւնն իր տգեղու-  
թեան պատճառ է , կրնայ ուրացուիլ թէ մէկն ,  
առաքինութիւնն՝ առողջութիւնը կպահէ , և թէ  
միւսն , այսինքն մոլութիւնը , զանի կ'մնասէ :

Բնութիւնն , եթէ համարձակիմ ըսելու ,  
գաղտնի գատաւոր մ'է . իր իրաւաբանութիւնն  
ըլլալով համբերող , միշտ աչալուրջ , բան մը  
իրմէ չփախչիր : Բնութիւնը կ'ճանաչէ և կտեսնէ  
մարդուս աչքին չերեցած , և իր օրէնքներովն

անընդունելի եղած յանցանքները : Նույն ժամանակ  
զերազոյն , յախանաական սրտումներն , առա-  
ջին սկզբունքէ մը բխեալ , սերնդէ սերունդ  
կ'յաջորդեն , և թո՛ւն , որ վճատութենէն ալ  
կակսի իր ցաւոյ զազանքն անարգել , կրնայ  
մնտակով զանել իր քաշածներուն պատճառն  
իւր նախաճարց շախաղանցութեանց մէջ : Զին  
առածը , թէ ' յանցաւորին պէտք է ներել ' , ոչ  
միայն ըստ իրաւանց և բարոյականի իր ճշտար-  
տութիւնը կ'զանէ , այլ նաև ըստ նիւթականին :  
Նոյն որ վերոյիշեալ խրատները հիւանդութեանց  
ճննդեան միայ ըսեն , կարօտ է օգոգուիլ մարդ-  
կութեան բարեկամ բնադիտէ մը : զի այնպիսին  
կարող պիտի ըլլայ ցոյցնել ամեն մայրկեան և  
ամենայն զիբութեանը , թէ ներկայ սերնդեան  
սկարսութեան և հիւանդութեանց աղբիւրն  
աւելի բարոյական , քան թէ փիզիկական պատ-  
ճառաց մէջ կ'զանուի : և թէ զանոնք նախա-  
տեսելով արտարութեաւ զարմանք , չէ թէ միայն  
նիւթական կամ փիզիկական պատարական-  
թիւնն է , այլ աւելի բարձր , պսիւնքն բարո-  
յական , կամ մէկ խօսքով , կասարեալ զաստի-  
արականութիւնը : Ըստ անգամ բժիշկը կրամ-  
բասուին , և երբեմն ալ իրաւամբ , մի միայն  
նիւթազէտ բնադնուն , և մարդս՝ միայն սկզբի ,  
կրճիկի , միտերու , սրեան , ճեղերու , աղեքնե-

բու , մաշկերու , և այլն , միութիւն մը , օգին  
 թմբուածինովն ասորդ գոյութիւն մը նկատու-  
 թուն , ու մարդուն բարոյական մասը մտնալով ,  
 Այս անբանասանութիւնն , իրաւակը կամ յան-  
 իրակ , այսու ամենայնիւ մեր վարդապետութիւնը  
 չկրնար ջնջել : Մենք առաքինութիւնն առող-  
 ջութեան հետ միացեալ ըլլալն հաստատուով ,  
 ոչ բարոյականին և ոչ կրօնադիտաց գէժ խօ-  
 սած կըլլանք : Այն մարդիկն , որոնց համար ,  
 բարերար բնութիւնն , երջանիկ կազմուածքով  
 մը , բարոյական յօժարութեանց կատարելա-  
 գործութիւնը գիւրացուցած է , զի ինչպէս որ  
 արհեստից համար ծնած գերազոյն տաղանդներ  
 կան , նոյնպէս կան նաև բարոյականութեան մա-  
 սին գերազանց սակզծուած հոգիներ , ինչպէս են  
 Մակոս-Աւրելիոս ,\* Սոկրատ ,\*\* Հուսարտ ,\*\*\*  
 Նէն ,\*\*\*\* և այլն , նոյնպէս ալ հոգեկան և

\* Փիլիսոփայ , ծնաւ 121 թն Քրիստոսէ  
 առաջ ի Հռովմ , աղնուական ընտանիքէ . մե-  
 աւա 180 թն (Քրիստոսէ առաջ) : Հաս դրու-  
 թիւններ ունի , որոնցմէ շատերը զանազան լեզ-  
 րաց թարգմանեալ է :

\*\* Հայն Փիլիսոփայ հռչակաւոր , ծնաւ  
 Աթէնա 470 թն Քրիստոսէ առաջ . հայրը  
 քանդակագործ Սոփրոնիոս անուն , մայրն ալ  
 դայեակ մ'էր , Սկնարէթ անուն : Ինքն ալ հօրն

մարմնական երկու առողջութեանց այս ներ-  
դաշնակութիւնն անշուշտ ասոնց մէջ աւելի կա-  
տարեալ և աւելի հաճոյական պիտի տեսնուի ,  
քան թէ աւելի պակաս յարմարութիւն ունե-  
ցողներուն մէջ . բայց այս կնամանի , աւազոտ

---

արհեստին ծառայեց , բայց շուտով թողուց ,  
դիտութեանց հետեւելու . իբրև քաղաքացի բո-  
լոր պարտաւորութիւնները կկատարէր թէ խա-  
ղաղութեան , և թէ պատերազմի ատեն : Իր  
քաջութեամբը հռչակաւոր եղաւ շատ անգամ ,  
մասնաւորապէս Թանակրի մէջ և Տէլիուժի  
պատերազմին , որ ատեն Քսէնոփոնի և Աշ-  
կիբիադէսի կեանքն ազատեց : Ամէն տեսակ ա-  
ռաքինութեանց , թէ հասարակաց և թէ ան-  
հատականաց , օրինակ հանդիսացաւ . հռչակա-  
ւոր եղաւ իր անշահախնդրութեան , բարեսր-  
տութեան և հոգւոյ հաւասարութեանը համար :  
Ինչպէս կպատմուի թէ , Քսանթիպպոս իր կինը  
շատ անգամ փորձեց իր համբերութեան աս-  
տիճանը : Ա երջապէս արժանի եղաւ , Վեղիփոին  
պատգամախօս Քուրմէն , մարդոց ամէնէն իմաս-  
տունը կոչուելու : Այսու ամենայնիւ շատ թըշ-  
նամիներ ունեցաւ : 424 թուականէն (Քրիս-  
տոսէ առաջ) սկսեալ , Արիստոփանէս բանաս-  
տեղծը զանի տեսարան հանեց . վերջապէս իր  
թշնամիներէն երեքն , Անիթուս , մեծ և կարող  
մարդ . Մէլիթուս , բանաստեղծ , և Վիքոն ,  
քաղաքական ճարտարախօս , իրեն դէմ միացան



երկրէ մը փոքր ինչ պտուղ և ծաղիկ հանելու  
համար ծանր աշխատութեանց կարօտելուն : Նայց  
երկնային լուսոյ ճառագայթներն որոտման ա-  
տենի կայծակին նման աւելի լուսով պիտի փայ-  
լին , երբ աւելի մութ գիշերուան մը մէջ ցայ-

---

և զրպարտեցին զինքն , ըսելով թէ երիտա-  
սարգութիւնը կմոլորցնէ , և նոր Մատուածու-  
թիւններ կաւելցնէ : Չուզեց անոնց դէմ դնել ,  
և ընդդէմ իւր անմեղութեան , մոլախինդ  
(պալարը խարայ) թոյնը խմեց : Նանտ եղած  
ատենն իր բարեկամները ճար գտան զինքը  
փախցնելու . սակայն մերժեց , օրինաց դէմ  
չգործելու համար : Մեռաւ 400 թուականին  
(Քրիստոսէ առաջ ) զարմանալի խոնարհու-  
թեամբ և քաջութեամբ : Սոկրատ՝ փիլիսոփա-  
յութեան պատմութեանը մէջ մեծ տեղ ունի :  
Ասրատէր բոլոր փիլիսոփաներն , որք մարդուն  
և բարոյականութեան վրայ զբաղին , կրկնելով  
յաճախ սա առածը , թանիք շէշ : Սոկրատ բա-  
րոյական գիտութեան վրայ առաջին գրող ճանչ-  
ցրուած է . զանազան մասանց բաժանեց առա-  
քինութիւնները ( խոհեմութիւն , ժուժկալու-  
թիւն , արդարութիւն , ևն ) : Մեղի-թի-ն ընելը ,  
կըսէր , երջանի-թեան հասնելու առիճն հասարակ  
ֆիլոսոֆ է :

\*\*\* (Ղօն) Հօուարտ Մեղիացի հռչակաւոր  
մարդասէր , ծնաւ 1726ին . հայրը պատերու ներ-  
կեալ թուղթ ծախող վաճառական մ'էր , որոյ մեծ

տին , ու նիւթական ծածկոցը պիտի փոխեն ,  
 ինչպէս որ այն տեսնուեցաւ Աղկրատին դիմաց  
 վրայ . և ահա ասոր համար է որ Ապողոնի  
 խօսքերն երթալով աւելի կհաստատուին : « Արե-  
 սին խորշոճներն (փոխերն) անգամ իրենց գարունն ու-

հարստութիւն թողուց : Օրովու վրայ բռնուե-  
 լուն և բաւական ատեն դերի մնալուն , այն-  
 քան սիրտը շարժեցաւ բանտարկելոց վիճակին  
 վրայ , որ որոշեց իր կեանքն անոնց օգտին զո-  
 հելու : Վրեթէ բոլոր Աւրոպան ճանապար-  
 հորդեց , բանտերն , անկեղանոցները , հիւան-  
 դանոցներն աչքէ անցընելու , նոյն տեղեաց  
 առողջապահիկ կանոնաց դէմ եղածներուն մի-  
 ջոցներ հնարելու , և հիւանդները խնամելու :  
 Մեռաւ 1790ին գէշ տենդէ մը զոր ստա-  
 ցաւ Քերսոնի քաղաքը , Սուսիոյ մէջ , նոյն  
 հիւանդութեամբ պառկող հիւանդ մը խնա-  
 մելուն : Իր քաղաքացիքն ասոր մահուանէն ետքն ,  
 արձան մը կանգնեցին : Ասի , շատ գրութիւն-  
 ներ թողուց թէ Անգղիոյ և թէ Աւրոպիոյ  
 քաղաքաց մէջ պտրտած հիւանդանոցներուն  
 վրայ , որոնցմէ խիստ շատերն Աւրոպական լեզ-  
 ուաց թարգմանեալ են :

\*\*\* Ամերիգայի Ռէնսիլվանեայի օրէնըս-  
 դէտը , ծնաւ 1 յոնտոն 1644ին . հայրն էր Ալը  
 Ռիլեամ Ռէն , Անգղիացի Օրվապետ , որ մեծ  
 ծառայութիւններ ըրաւ Աթիւարթներու ցեղէն  
 եղող թագաւորներուն : Վաղղիա , Ստորին-Վա-

նք" : Ա երջապէս , և ի նչ է առողջութիւնն ,  
եթէ ոչ կենաց գործողութիւններուն գեղեց-  
կութիւնն : Արբ առաքինութիւնն՝ ընտիր գոր-  
ծիք մը կգտնէ , իր արդիւնքները դիւրութեամբ  
կկատարին , և այս ալ իր գերագունութիւնը

---

հանգները ճամբորդեց , ուսկից դարձին Վու-  
էքըր եղաւ , որոյ համար Իրլանտիոյ մէջ բան-  
տարկուեցաւ և հայրն ալ տնէն վռնտեց : Ասոր  
վրայ գրել իր և նոր աղանդին վրայ քարոզել  
սկսեց , որոյ համար երկու անգամ ալ Աոնտոն  
բանտարկուեցաւ : 40 000 Անգղիական ոսկի ,  
(5,000,000 դրուշ) և 400,000 ֆրանք ալ կա-  
ռավարութենէն առնելիք ժառանգ մնաց , որոյ  
փոխանակ , այսինքն 400,000 ֆրանքի , Ամերի-  
գայի Միացեալ Վահանգաց Տըլաւէրի կողմէն  
երկիր ընդունեց , ուր հիմնարկեց 1681 ին գե-  
ղեցիկ գաղթականութիւն մը , և կոչեց զանի  
Ռէնսիլվանիա : Աոն ամէն ազգաց և կրօնից  
համար , անխտրաբար անկեղանոց մը բացաւ ,  
դաշնակցութիւններ ըրաւ վայրենեաց հետ , զորս  
հաւատարմութեամբ պահեց կէտ առ կէտ , գե-  
րութիւնը ջնջեց , գաղթականաց համար Սահ-  
մանադրութիւն մը խմբագրեց , 24 յօդուած-  
ներէ բաղկացեալ , (այս եղաւ հիմն Միացեալ  
Վահանգաց Սահմանադրութեան) , և հիմնար-  
կեց Պիլատէլֆիա քաղաքն : Անգղիա զառնա-  
լով , Ղէյմս Ռ. Թագաւորին սիրելի եղաւ ,  
և այնուհետեւ ատելի Ռեիլեամ Վ. ի , և որով  
զրկուեցաւ իր վարչութենէն , բայց կրկին ձեռքն

նշմարելու համար . որ ան ատեն գործերն ալ  
աւելի պարզ և բնական կերևին , բայց անկա-  
րելի է ներդաշնակութիւն չունեցող գործիքէ  
մը անուշ ձայներ հանել . և ինչպէս որ , հան-  
դիսաւոր վայրկեանի մը մէջ , երկայն ժամանակ  
պահ մնացած գեղեցկութիւնը , կրնայ մէկէն  
ի մէկ բարերար մարդու մը երեսը լուսաւորել ,  
նոյնպէս ալ շատ անգամ առողջութեան թան-  
կագին հարստութիւնը ձեռք ձգելու համար ,  
խորին և համարձակ որոշում մը բաւական է :

“ Մի ճորձեր , ըսած է , Վալաթէո , երև-  
ելի խտրագիման , թ' ջանար , ճարդս գեղեց-  
կացնել , առանց անոր հացս-նի-նը բար-ոտելու ” :  
Մենք ալ համողմամբ և կատարեալ հաւատով  
կաւելցնենք թէ “ էնէ զանի ա-ելի բար-ոտելու-  
չէս , անոր առողջո-նի-նը պահել թ' ճորձեր ” :

---

անցուց 1696ին , և յետոյ գնաց Մեքիկայ  
երկու տարի : Արկին անգամ Արոպայ դար-  
ձաւ , նոր Վաղթականութեան վաճառականու-  
թեան ծաւալման օգտակար արտօնութիւններ  
առնելու , և մեռաւ 1718ին Պէոքշայրի մէջ :

Փիլիսոփայք , Նէնն , յաճախ կ'իշեն իբրև  
օրինակ իմաստութեան և մարդասիրութեան :  
Մօնթէսքիէօ զանի , նոր Վիկուրքոս կանուանէ :  
Եսի շատ գործեր ալ գրած է :

# Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

Արևազայտ-Ռե-ն :

Արևազայտ-Ռե-նը ճարտչային Բն-Ռե-ան  
Տեղ շերտի-լե-ն\* պաշտօնը կհասարէ . նա  
է աշխարհի առաջնորդն . անով է որ  
ճարտչս ինքս Բարի և ինքս շար կուլայ :  
Շեյնը\*\* :

Նոր դարուս շոգեբանները կնեղանան  
իրենց նախորդներուն դէմ , մարդկային մտաց  
միութիւնը չճանչցած ըլլալուն , վերին և ստու  
րին կարգի բազմաթիւ կարողութիւններ որո  
շելուն , ինչպէս՝ բանն , իմաստութիւնն , իմա  
ցականութիւնը , կամքն , երևակայութիւնն , յի  
շողութիւնն , և այլն : Ստոյգ է այս նախատինքն ,  
եթէ իմացական կարողութիւն ըսելով գործող  
զօրութիւններ կ'իմացուին . զի միտքը միակ զօ  
րութիւն մ'է , կատարեալ , անբաժանելի , և  
իր ինչ ըլլալը միայն իւր գործունէութեան

\*Չաստուած ճարտարասութեան , վաճա  
ռականութեան և աւագակաց :

\*\*Վերմանացի գրագէտ . ծնաւ 1749 ին  
Վանկըվիզընի մէջ և մեռաւ 1803ին . 1776ին  
Իւն-անուն օրագիրը հրատարակեց : Ուրիշ  
շատ գրութիւններ ալ ունի :

ձևերովն ու արդիւնքներովը կհասկցուի . բայց  
և այնպէս խիստ օգտակար է ամենայն պարզու-  
թեամբ և որոշակի այս զանազան կատարելու-  
թեանց նշանները դասել : Մենք կպարտաւո-  
րինք , ուրեմն , շնորհակալ ըլլալ հին դպրո-  
ցին , մարդս լուծելը մեզ սովորեցնելուն , փո-  
խանակ զանի ամենայն ապշութեամբ իբրև հը-  
րաշք նկատելու : Մենք մեր դասատուաց դա-  
սերուն պիտի հետեինք , և առանց մոռնալու  
իր ամբողջութեանը մէջ մարդուս իմացական  
կարողութեանը զմայլելու և անիկայ գոհու-  
թեամբ նկատելու , սոյն կարողութեան գոր-  
ծողութիւնը պիտի սովորինք , իր երևոյթից զա-  
նազանութեանը մէջ : Արոնք երեք զանազան  
խումբեր կձևացնեն , և կդասուին այսպէս —  
մտածելու կարողութիւն , զգալու կարողու-  
թիւն , (որոյ մէջ կպարունակին երևակայու-  
թիւնն և զգացմունք) և կամենալու կարողու-  
թիւն : Իմացական կենաց սնունդն են խոր-  
հրդածութիւնք , իւր կենսական օդն են զգաց-  
մունք , իւր Ֆիզիքական կրթութիւնքն են կամ-  
քին գործերը : Վնենք , ուրեմն , այս երրակի  
տեսութեանց մէջ , թէ ի՞նչ է հոգւոյն ազդե-  
ցութիւնը , մարդս նուաճող զգալի ցաւոց մէջ :  
Եթէ մտաց պիտութեան մէջ , աստիճաններ  
ընդունիլ կարելի է , պէտք է դնել երևակայու-

Եւ զանոն ամենէն ստորին , մէջ տեղը՝ հասնի , իսկ  
ամենէն վերը քանն : Այս կարգաւ է ահա որ  
մարդուս ապրելու ատենն , իր իմացական կարող  
ուժութիւնները կկատարելագործուին : Տղան կե-  
րուի , երիտասարդը կփփփփի , իսկ հասուն մարդը  
կհորատի . և եթէ ստոյգ է որ բնութիւնն , իւր  
գործոց մէջ , պղտիկէն մեծը կերթայ , այս բա-  
ժանումն ալ հաստատուն է : Աստի քանի որ  
երևակայութեամբ կսկսի , հետեւինք իրեն ու-  
րեմն . զի երևակայութիւնն իմացական աշխար-  
հին և Ֆիզիքական աշխարհին մէջ ձգուած կա-  
մուրջին կնմանի : Արաշալի , փոփոխական , և  
անբնական զօրութիւն մ'է , և ոչ մէկերնիս  
կրնանք ըսել որ զանի թէ հոգւոյն կամ թէ մարմ-  
նոյն յատկացնելու է , եթէ մենք զանի կկա-  
ռավարենք , և թէ մենք անով կկառավարուինք .  
և ահա չկրնալ որոշելնիս է որ մեզ իրաւունք  
կուտայ զանի նկատել իբրև միջնորդ բարոյա-  
կան և Ֆիզիքական գործողութեան մէջ . ասով  
միայն անոր կարեօրութիւնն աւելի լաւ կըբըռ-  
նենք : Արդարև , մեր մէջը տեղի ունեցած կամ  
անցած երևոյթից ուշի ուշով քննութեամբ մը  
պիտի ճանաչենք թէ , ոչ մտածելն , ոչ փա-  
փաքելը , մեր մարմնոյն վերայ առանց միջնորդի  
գործողութիւն մ'ունին , այլ միայն երևակա-  
յութեան օգնութեամբը կկատարուին : Ահա

քննութիւն մը , որ անգին է միանգամայն թէ  
հոգեբանին և թէ բժիշկին : Արեւակայութիւնն  
խմացական կազմուածքէն զատուած բոլոր ան-  
դամոց շարժուն զօրութիւնը , շարժառիթն ու  
աննդարար մայրն է : Առանց անոր , ամէն պատ-  
կեր խաւարած , բոլոր միտքերը համր և ամուլ ,  
ամէն զգացմունք վայրենի և կոշտ են : Արեւա-  
կայութիւնն է մայր երազոց , մայր բանաստեղ-  
ծութեան , և առանց բանաստեղծութեան , և  
ոչ բան մը գերագոյն է : “Անդհանրապէս ը-  
սաւ , Հէրտլըր , երեւակայութիւնն է , հոգւոյն  
բոլոր կարողութեանց մէջէն ամենէն քիչ սով-  
րուածն , և ամենէն սակաւ ուշադրութեան  
գրաւուածը : Օ՛ի , երեւակայութիւնն , ամբողջ  
կազմուածքին հետ միացեալ ըլլալով , մանա-  
ւանդ ջղաց և ուղեղին , զոր կապացուցանեն  
այնքան տարօրինակ հիւանդութիւնք , կերեայ  
թէ , ոչ միայն հոգւոյն բոլոր գերագոյն կա-  
րողութեանց հիմն ու կայն է , այլ նաև միտքն  
ու մարմինն իրար միացնող կայն : Արեւակա-  
յութիւնն է մտածելու կարողութեան ծառա-  
յութեանն յատկացեալ բոլոր նիւթական կազ-  
մուածքին ծաղիկը” :

Քանթ երեւելի փիլիսոփայն , Հէր-  
տլըրի հակառակօրդը , հաստատեց ևս թէ երե-  
ւակայութեան շարժիչ զօրութիւնն աւելի ներ-



քին և թափանցիկ է քան զամենայն զգալի զօրութիւն : “Մարդ մը , կըսէր շատ անգամ , որ սիրելի ընկերութեան մը զուարճութիւնը կատարեալ հաճոյքով զգացած է , աւելի ակտիւ թակով պիտի ուտէ՝ քան թէ երկու ժամ ձիով պտըտելէն յետոյ . — զբօսացուցիչ ընթերցում մը մարմնոյ կրթութենէ աւելի օգտակար է առողջութեան ” : Այս մտօք , կամ նպատակաւ , կնկատէր նաև քուն ատենի երազներն , իբրև տեսակ մը շարժում բնութեան , կազմուածքին մեքենայն պահելու :

Ամեկնէր թէ ընտիր ընկերութեան մ'ուրախութիւնն՝ արդիւնք է դիւրամարսութեան , և անտի ծագած աղէկութիւնն առողջութեան . այս միաւորութեանց ճշմարիտ և ընտիր նպատակն ուր կսպառին , ամենազնիւ զգացողութիւններն ու մտաց բոլոր գանձերն ալ : Աւրիշ Տաղանդ մ'ալ , “հոգւոյ կլիման” կոչած է երեակայութիւնն :

Իմացական հիւանդութիւնք ալ իրենց արմատն ու կեդրոնը , միմիայն երեակայութեան մէջ ունին : Օ՛րի եթէ այս հիւանդութեանց կեդրոնը միտքն ըլլար , սխալմունք կամ մոլորութիւնք պիտի ըլլային , և ոչ թէ հիւանդութիւնք : Այժմէ մարմնէ յառաջ գային , հոգեկան հիւանդութիւններ չպիտի ըլլային : Մարդկու-

Թեան այս տխուր արկածքը ծնունդ առնելու  
համար, պէտք է որ մարմինն ու հոգին իրա-  
րու դէմ կից ըլլան, և ահա այս միութիւնն  
ալ ուրիշ բանով չկրնար ըլլալ, այլ միայն  
երեակայութեամբ: Ահա առողջաբանութեան  
գերագոյն և ճշմարիտ պաշտօնն է, միշտ այս սերէ  
եղող հիւանդութիւնք հետի նետել:

Երեակայութեան կեդրոնն է նիւթական  
աշխարհէն դուրս: Մարդկային կենաց թշուա-  
ռութիւնն և երջանկութիւնն ըստ քմայ այս  
զօրութեան կանոնաւոր կամ անկանոն կրթու-  
թենէն ու գործածութենէն կախումն ունի:  
Երբ չափէ դուրս զօրանայ, արթուն ատեննիս  
անգամ մեզ կերազեցնէ, որ է յիմարութեան  
առաջին աստիճանը: Բանաստեղծին նայուածքն  
անգամ, մտացածին հայեցողութեան մէջ յա-  
փըշտակեալ, գոնէ երբեմն ալ առ ինքն յատ-  
կացուցած չունի, ինչպէս մահառիթ հրապոյր-  
քով մը, զինքը պաշարող սոսկալի ուրուա-  
կաններ, այնքան ժամանակ, որքան իւր աչ-  
քերը՝ գեղեցկին, երկնային աստղին, դարձած  
կկենան: Վոյութեան հասարակ պայմաններուն  
մէջ ալ, երեակայութիւնը մեր վրայ, մութ և  
անդադար աշխատութեամբ մը, տեսակ մը նո-  
րողիչ զօրութիւն չ'ներգործեր: Հօր և մօր  
միութեանը մէջ, ըստ մեծի մասին, տղուն

ձևերն առաջուց չորոշեր : Աւ եթէ , այս նկատմամբ , մարդս բողոքովին երևակայութեան որդին է . այս զօրութիւնն ալ սկզբնական սկըզբունք մը չէ մի մեր մէջ : Արնանք ըսել թէ նա ընդ մեզ է , մենք մերն ըլլալէն առաջ , և ըլլալէ դադրելէ ետքն ալ : Նա ընդ մեզ է , երբ մեր անձնիշխանութիւնը նուաճեալ , և կայեալ է : Տղայութեան , քունի , խենդութեան , մտացածին բանդագուշանաց մէջ : Ինչ որ է արտաքին աշխարհս , այս ամէն ազդեցութիւններովն , արտաքին մարդու համար , երևակայութիւնն , այս ներքին աշխարհն ալ , որ կենաց գոյութիւնն ու հիմը կ'յօրինէ , նոյնն է ներքին մարդուն համար : Ինչպէս , ուրեմն , իր գործողութիւնն առողջութեան նկատմամբ աներկբայելի կըլլայ : “ Եւստ անգամ , ըսաւ , Վիշթէնպէրկ\* , ինքզինքս ամբողջ ժամերով երազեցի , և ամէն տեսակ մտացածին խորհրդոց տուի . առանց այս բարոյական դարմանի , որ ամէն տարի ջուրերն երթալու ատենս կընէի , անկարելի էր որ մինչև ցարդ ապրէի ” : Քիչ մը վերը զգացողութիւնն ու երևակայութիւնը մի և նոյն կարողութեան մէջ կըլինու-

---

\* (Ղործ-Քռիսթոֆ) . Ֆիզիքագէտ և բարոյագէտ . ծնաւ 1742ին և մեռաւ 1799 ին Տարուշթատի մէջ : Եւստ գրութիւններ ունի :

Թին ըսելովս , միանգամայն թէ մէկին և թէ՛  
միւսին աւելի քացարձակ սահման մը տալէ հետի  
կենալ չուզեցի : Իմ կարծիքս էր հասկցնել թէ  
արդարև զգացողութիւնն ու երևակայութիւնը  
մի և նոյն կարողութիւնն են՝ կրաւորական կամ  
ներգործական եղած ատենի նկատմամբ : Արե-  
ւակայութեան աշխատութիւնը զգացողութիւն  
մը կպահանջէ . այն ատեն կզգանք , երբ որ  
կերևակայենք . ահա այս պարագայիս մէջ երե-  
ւակայութիւնը ներգործական է , իսկ զգացո-  
ղութիւնը կրաւորական : Բիչ մը խորհելով  
կրնայ հասկցուիլ թէ այս ըսածնիս բառաշա-  
րութիւն մը չէ : Մեր գոյութեան զգայուն  
կողմն աշխարհիս ներկայացնելը , թշնամոյն թու-  
րին առջև կուրծքը մերկացնել է : Արտաքին  
պատճառաց գործողութեան՝ ներգործական ե-  
րևակայութիւն մը դէմ դնելը , զինուիլ և  
ինքզինքը պաշտպանել է : Արեմն , ասոր , ինչ-  
պէս բոլոր բաներու մէջ ալ , ուրախութիւն և  
ցաւ մի և նոյն աղբիւրէ կձնին : Ամէն մարդ ,  
պատմութեամբ և օրինակօք , երևակայութեան՝  
հիւանդութեանց վրայ ըրած առողջարար կամ  
հակառակ ազդեցութիւնը կճանաչէ : Արդարացի  
չէ՞ մի հետեցնել թէ հիւանդութիւնները բը-  
ժըշկելու կարող պատճառ մը , կրնայ ևս զա-  
նոնք դարցնել : Աւ թէ մի և նոյն պատճառն

որ զանոնք ծանրացնելու զօրութիւնն ունի ,  
կրնայ ևս զանոնք մինչև մահառիթ ընել տալու :  
Տես այն թշուառաց ցաւերն որչափ ծանր և  
վտանգաւոր են , որք ինքզինքնին երեւկայա-  
կան հիւանդութենէ մը զարնուած կարծելով ,  
ուշ կամ կանուխ ստուգապէս նոյն հիւան-  
դութեանց ենթակայ կը լլան :


Վ. յսպիսի երեոյթի մը բնաղննական պատ-  
ճառը միշտ դէպ ի մի և նոյն անդամի մը վրայ  
շարունակ ջղային ձգտումն է , որ վերջապէս իր  
մարմնական շրջանն ալ կզարնէ : Պօհէռավի\*  
այն աշակերտը կ'իշուի , որոյ վրայ իր դասա-

---

\* Հռչակաւոր բժիշկ , ծնաւ 1868ին Շէյ-  
տի մօտ Արուստի մէջ . հայրն ուղեց նախ  
զինքը կղեր ընել , բայց բնական գիտութեանց  
վրայ աւելի ճաշակ ունենալով , բժիշկ եղաւ  
1696ին , այսինքն 28 տարեկան . հետզհետէ  
չորս տեսակ գիտութեան , տեսական՝ գործնա-  
կան , տնկաբանութեան , և տարրալուծութեան  
դասատու կոչուեցաւ , ամենուն մէջ ալ մէկզմէկէ  
աւելի յաջողելով . բաւական ատեն ալ այս  
չորս դասերը միանգամայն կրնէր : Մեռաւ  
1738ին : Վսի իր դարուն մէջ բժշկութեան  
վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ թէ՛ դասե-  
րովն և թէ՛ գրութիւններովն : Վսի լուծեց ա-  
րիւնը , կաթն , և այլն . անհամար գործեր ունի :

404]

տուին դասերուն մէջ նկարագրած բոլոր հիւ-  
 ւանդութիւններն յաջորդաբար տեսնուեցան ,  
 ինչպէս տենդ և բորբոքում ձմեռը , ջղային  
 հիւանդութիւն ամառն , և այնքան սաստիկ որ  
 վերջապէս իր կեանքը վտանգի դնող ուսմունքը  
 թողուլ ստիպուեցաւ : Անգղիացի ծառայ մը ,  
 օրագրոյ մը մէջ կատղած շան մը խածնելէն  
 յառաջ եկած սոսկալի մահուան մը պատմու-  
 թիւնը կարդալով , անմիջապէս ինքն ալ նոյն  
 հիւանդութենէն բռնուեցաւ , և արդարեւ սոյն  
 հիւանդութեան դէմ գործածուած դեղով կըր-  
 ցաւ ազատիլ : (Պոլիթանիա ( )րագիր , Անգղի-  
 ական , Ապրիլ , 1825) : Այն թշուառներն՝  
 որոնց երիտասարդութեան շուայտութիւններն  
 իրենց խղճի խայթ կուտան , և իրենց չափա-  
 ղանցութեանց հետևութիւններէն կսարսափին ,  
 ինքզինքնին ենթակայ ըրած հիւանդութեանց  
 պատկերը մտքերնուն մէջ կգծուին , և ահա այս  
 անդադար վախերը վերջապէս Ա Էրքարտին (բը-  
 ժիշկ) նկարագրած երևաչապահան խոտորին են-  
 թակայ կընեն , որ է տխուր հետևութիւն ֆի-  
 ղիքական և բարոյական վախերու : Ամէն բժիշկ ,  
 մանաւանդ մեր այս լուսաւորեալ ժամանակին  
 մէջ , յաճախ առիթ կունենայ այս տեսակ օրի-  
 նակներ տեսնելու և քննելու : Աչաց հիւան-  
 դութիւնները սովորելու ատեն , շատ անգամ





ԱՄՍԱԹԵՐԹ ԿԻԼԻԿԻԱ

1. ԿԻԼԻԿԻԱ, հնդարարակախ առիան առ-  
գամ ծը :

2. Բաժանորդագրութեանը արդեկան է :

3. Տարեկան գինը ԿԱՆՍՏԱՆԻ ԿԻԿ ՍԻ-  
ՑԱԹԻ ՄԱՏԻՏ է :

4. Անի Բառայն գինն է ԵՐԿՈՒ ՂՐՈՒՇ,  
և առաջը կրնայ ծախսու առնել ա-  
ռիան առիան, առանց Բաժանորդ գրու-  
թեան :

Կանայն և յօդուառն հեղուեալ հասցեով  
դիտէ և առաջը —

Տոմար Մ. Բ. Բաժանորդան, խմբ. գիր կի-  
լիկա առաջը լի. Կոստանդնուպոլսի  
Ղալաթի Տեղեբեկ խան. Թի. 14.

Docteur M. P. Utudjian  
rédacteur du Guiliguia  
Revue Hygiénique Arménienne.  
Constantinople,  
Galata, Deyirmen han N°. 14.